



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Գաբրիելյանը, Արմեն Մարգարյանը, Մաղաք Մարտիրոսյանը, Էմիլ Սարգսյանը, Գեղամ Վարդանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանը, Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը, առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:

Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 10 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 10 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

3. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի հաղորդման մասին:

4. Քաղաքացի Իսկուհի Լևոնի Եսայանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության 0.2642 հա բնակելի կառուցապատման հողի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

5. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերից պարզ գրավոր ձևով վարձակալության տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:

6. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 21-ի թիվ 07 և սեպտեմբերի 14-ի թիվ 102 որոշումների հավելվածները նոր խմբագրությամբ շարադրելու մասին:

7. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 84 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

8. Գլաձորի համայնքապետարանի միջոցներով ձեռք բերված ցեմենտից զոհվածների պանթեոնների շինարարական աշխատանքներում օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:

9. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրում 2020 թվականին կառուցված գազատարը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Վայոց ձորի գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղին անհատույց տրամադրելու մասին:

10. Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին:

11. Տեղական վճարի գծով արտոնություն տալու մասին:

12. «Գլաձոր համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տրամադրության տակ գտնվող ուղևորատար միկրոավտոբուսով անհատույց ուղևորափոխադրում կատարելու համար թույլտվություն տալու մասին:

Կողմ-6	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------